

## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՅ



### Նպաստել գյուղացիների եկամուտների ավելացմանը

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն աշխատանքային այց է կատարել Սյունիքի մարզ:

Նախարարին ուղեկցում էին Սյունիքի մարզպետ Սուրբիկ Խաչատրյանը, «Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊԻ-ի տնօրեն Գագիկ Խաչատրյանը, «Հայաստան» ՊՈԱԿ-ի տնօրեն Մարտոն Մաթևոսյանը: Այցի սկզբում նախարարն այցելել է Տուրոս համայնք, գրուցել համայնքապետի և բնակիչների հետ, ծանոթացել նրանց հուզող խնդիրներին: Գյուղացիները, նախարարի հետ զրույցում, հատկապես կարևորել են գյուղատնտեսական մթերքների իրացման հարցը, մասնավորապես, շեշտադրել մսի, կաթի մթերման ցածր գները, ինչպես նաև բարձրագույն մթերման դիմաց կատարվող վճարումների հարցը: Տուրոսի բնակիչներին մտահոգում էր նաև գյուղտնտեսական մաշվածությունը, ինչը խոչընդոտում է գյուղատնտեսական աշխատանքների ժամանակին և որակով կատարմանը:

Արձագանքելով մթերման հետ կապված հարցին՝ նախարարը մասնավորապես նշել է, որ ընթացիկ տարին աչքի է ընկել բերքի առատությամբ, ինչը՝ հատկապես խաղողի մթերման հետ կապված, որոշակի դժվարություններ է առաջացրել, որոնց սակայն նախարարությունը իրականացնում օպերատիվ լուծումներ է տվել և արել է հնարավորը՝ խնդիրները կարգավորելու համար: Նախարարի խոսքով՝ պարենային մի շարք ապրանքների (ցորեն, կաթ) ցածր գները միջազգային տեղեկանքներով են պայմանավորված և ժամանակավոր բնույթ են կրում:

2

## ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

### Համաշխարհային բանկի և Միջազգային ֆինանսական ընկերակցության պատվիրակությունը Հայաստանում

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն ընդունել է Համաշխարհային բանկի և Միջազգային ֆինանսական ընկերակցության (IFC) համատեղ աշխատախմբին, որը գլխավորում էր Բեքզոդ Շամսիևը: Հանդիպման նպատակն էր՝ քննարկել «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության (CARMAC) երկրորդ ծրագրի» իրականացման ընթացքը:

CARMAC 2 ծրագրի հիմնական նպատակներն են՝ բարելավել արտադրարարի և անասնապահության համակարգերի արտադրողականությունն ու կայունությունը թիրախային համայնքներում, նաև ապահովել ընտրված բարձրարժեք ագրոպարենային արժեչափերում արտադրվող և շուկայահանվող արտադրանքի ծավալների աճը: Ծրագրի շրջանակներում մշակված միջոցառումները նախատեսվում է իրականացնել 2015-2019 թվականների ընթացքում: «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության առաջին ծրագրի շնորհիվ, մեզ հաջողվել է լուրջ հաջողություններ գրանցել գյուղատնտեսության բնագավառում, հատկապես անասնապահության ոլորտում: Սակայն, ներկայիս իրողությունները թելադրում են վերանայել իրականացվող ծրագրերը՝ նրանցում ընդգրկելով նոր թիրախային խնդիրներ», - նշել է նախարար Սերգո Կարապետյանը:

Նախարարը ոլորտի առաջնահերթ խնդիրների թվում, մասնավորապես, մատնանշել է գյուղմթերքի շուկայահանման և իրացման, սպանդանոցների, սառնարանային տնտեսությունների, կաթի, մսի, պտուղ-բանջարեղենի վերամշակման արտադրամասերի կառուցման, խոշոր եղջերավոր կենդանիների համարակալման և հաշվառման, ֆիլոքսերագերծ տնկարանային տնտեսության հիմնման և հյուսվածքային լաբորատորիայի ստեղծման, անասնաբուժական սպասարկման նոր կենտրոնների կառուցման, ինչպես նաև՝ խորհրդատվական ծառայությունների հզորացման անհրաժեշտությունը: Շեշտելով ՀՀ ԳՆ Բանջարաբուստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոնին, Երկրագործության գիտական կենտրոնին և Ագրոքիմիական ծառայությանը

2

## ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանն այցելել է միջազգային բեռնափոխադրումներ իրականացնող «Սպայկա» ընկերություն:

Նախագահը շրջել է ընկերությունում, ծանոթացել ընթացիկ աշխատանքներին, իրականացված ներդրումներին և զարգացման ծրագրերին, ըստ որոնց, 2015թ. «Սպայկա» ընկերությունը նախատեսում է շահագործման հանձնել ավելի քան 40 մլն տարա տարեկան արտադրողականությամբ պտուղբանջարեղենի վերամշակման խտանական տեխնոլոգիաներով հագեցած արտադրամասը, որը կապահովի հավելյալ 100 աշխատատեղ (ներկայումս ընկերությունն ունի շուրջ 300 աշխատակից): Արտադրամասի կառուցման համար կատարվել է մոտ 4 մլն ԱՄՆ դոլարի ներդրում: Ընկերությունը, ըստ պատասխանատուների, մտադիր է 2016-2017 թթ. կրկնապատկել արտահանման ծավալները՝ ներգրավելով հավելյալ ներդրումներ՝ բեռնատար մեքենաների քանակի ավելացման, ջերմոցային տնտեսությունների և սառնարանային համալիրների ստեղծման նպատակով: 2015 թ. նախատեսվում է նաև շահագործման հանձնել «Վոլվո», «Ռենո», «Բերնարդ», «Կրոնե» և «Կարիեր» ընկերությունների հայաստանյան ներկայացուցչության բեռնատարների, սառնարանային կիսակցորդներին և ագրեգատների սպասարկման կենտրոնը, որը համապատասխան վերապատրաստում անցած մասնագետների միջոցով կապահովի լրացուցիչ 25 աշխատատեղ (ներդրումների ծավալը կկազմի շուրջ 2 մլն ԱՄՆ դոլար): «Սպայկա»-ում հանրապետության նախագահը ծանոթացել է նաև հիշյալ կենտրոնի կառուցման աշխատանքներին:

Ընդհանուր առմամբ, ընկերության կողմից 2010-2015 թթ., գյուղատնտեսության և տրանսպորտի ոլորտներում իրականացված ավելի քան 30 մլն ԱՄՆ դոլարի ներդրումների շրջանակներում ստեղծվել է հայկական թարմ և վերամշակված գյուղմթերքը միջազգային շուկաներում արդյունաբերական մասշտաբներով իրացնելու կայուն մեխանիզմ:

Նախագահ Սերժ Սարգսյանն այնուհետև մեկնել է Արտատի մարզ: Մասիս քաղաքում նախագահն այցելել է «Գրանդ Յուրիս»-ի կազմի մեջ մտնող՝ ստվարաթիթ արկերի արտադրությամբ ու տպագրական արտադրանքի թողարկմամբ զբաղվող «Գրանդ Մաստեր», ինչպես նաև՝ ծխախոտի հումքի մթերմամբ, վերամշակմամբ և սիգարետի արտադրությամբ զբաղվող «Մասիս Տոբակո» և «Ինտերնեյշնլ Մասիս Տոբակո» ընկերություններ: Նախագահը ծանոթացել է հիշյալ ընկերությունների գործունեությանը, արտադրանքի իրացման ծավալներին, կատարված ներդրումներին և զարգացման ծրագրերին: Ընկերությունների արտադրամասերում շրջային ժամանակ Սերժ Սարգսյանին ներկայացրել են, որ 2010 թ.-ից ի վեր, «Գրանդ Մաստեր» ընկերության վերագինման և արդիականացման ծրագրի շրջանակներում կատարվել է շուրջ 15.9 մլն ԱՄՆ դոլարի ներդրում: Ներկայումս ընկերությունն ունի շուրջ 250 աշխատակից՝ 183,000 դրամ միջին ամսական աշխատավարձով: 2015թ. արտադրանքի իրացման ծավալը կազմել է 10,542,320 հազար դրամ, որը 52.4%-ով ավելի է նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ:

Ըստ ընկերության պատասխանատուների՝ 2010-2015 թթ. ընթացքում «Մասիս Տոբակո»-ի ներդրումների ծավալը կազմել է շուրջ 5.1 մլն ԱՄՆ դոլար: Ներկայումս ընկերությունն ունի շուրջ 500 աշխատակից՝ 120,000 դրամ միջին ամսական աշխատավարձով: ՀՀ և ԼՂՀ տարածքում տեղադրվել են 318 ծխախոտի չորացման խցիկներ, որոնցից 228-ը տեղակայված են՝ Տավուշի, Արարատի, Վայոց ձորի և Արմավիրի մարզերում, իսկ 90-ը՝ Ասկերանի և Մարտունու շրջաններում: 2015 թ. մշակվել է 620 հա հողատարածք.

2

Ընդդեմ խոզերի աֆրիկյան ժանտախտի	Էջ 4
Իրականացվել են անտառ-վերականգնման աշխատանքներ	Էջ 5
Մասնագետի խորհուրդը	Էջ 6

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

1 որից ակնկալվում է մոտ 10,000 տ. ծխախոտի հումքի մթերում: 2015 թ. արտադրանքի իրացման ծավալը կազմել է 2,089,540 հազար դրամ, որը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ, աճել է 83 %-ով:

«Ինտերնեյշնլ Մասիս Տաբակ» ընկերությունում 2010-2015 թթ. ընթացքում, արտադրական սարքավորումների և հոսքագծերի ձեռքբերման նպատակով, ներդրվել է շուրջ 14.5 մլն ԱՄՆ դոլար: Ներկայումս ընկերությունն ունի շուրջ 1.330 աշխատակից՝ 172.000 դրամ միջին ամսական աշխատավարձով: Թողարկվող արտադրանքի 90 %-ն արտահանվում է 20-ից ավելի երկրներ: 2015թ. 10 ամսվա ընթացքում իրացման հատույթը կազմել է 42.914.244 հազար դրամ, ինչը՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ, 41%-ով ավելի է:



Մարզում հանրապետության նախագահն այցելել է նաև Տափերական համայնքում գտնվող «Արարատի կոնյակի գործարան «Ա.Կ.2.» ՍՊԸ: Ընկերությունը հիմնականում արտադրում է կոնյակ և գինի: Արտադրանքն ամբողջությամբ արտահանվում է ՌԴ, Ուկրաինա, Ղազախստան, Բելառուս և Գերմանիա: Նախագահը ծանոթացել է ընկերության ներդրումային ծրագրերին, որոնց շրջանակներում գործարանի տարածքում կառուցվում է պտուղաբանչարեղենի վերամշակման, այդ թվում՝ տոմատի մածուկի արտադրության արտադրամաս: Այն, ըստ պատասխանատուների, ունենալու է տարեկան շուրջ 10.000 տոննա պտուղ-բանջարեղենի մթերման և վերամշակման հզորություն: Արտադրամասը նախատեսվում է շահագործման հանձնել մինչև 2016 թ. մթերման սեզոնի սկիզբը: Բացի այդ, կառուցվում է կոնյակի հնեցման նոր մասն, և վերակառուցվում են հնեցման նախկին մառանները, որոնք հնարավորություն կտան արտադրության փաստացի ծավալներն ավելացնելու մոտ 20%-ով: Նախագահին ներկայացրել են, որ ներդրված միջոցների շնորհիվ, ընկերությունը ձեռք է բերել ժամանակակից ավտոմատ հոսքային գիծ՝ շալցման արտադրամասի և նոր սարքավորումների՝ կոնյակի սպիրտի թորման ու սառեցման համար:

Աշխատանքային այցի շրջանակներում, հանրապետության նախագահը Սուրենավան համայնքում այցելել է բիտումի գործարան, որի արտադրական հզորությունները թույլ են տալիս արտադրելու ամսական մինչև 3 հազ. տոննա բիտում: Ըրիվ հզորության անցնելու դեպքում, գործարանը հնարավորություն կունենա տարեկան արտադրել մինչև 43 հազ. տոննա արտադրանք՝ աշխատակիցների քանակը ներկայիս 39-ից հասցնելով 50-ի: Բիտումի նշված ծավալները կբավարարեն Հայաստանի և ԼՂՀ ճանապարհային պահանջարկի մեծ մասը: Հումքը մատակարարվում է երկաթգծով, հիմնական մատակարարն է «Ռոսնեֆտ» ընկերությունը: Հանրապետության նախագահին ներկայացրել են, որ ընկերությունում տեղադրված ժամանակակից սարքավորումները թույլ են տալիս արտադրելու Հայաստանի կլիմայական պայմաններին բավարարող բարձրորակ բիտում:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՅ

Նպաստել գյուղացիների եկամուտների ավելացմանը

1 Նախարարը հայտնել է, որ բոլոր մարզերում, այդ թվում՝ նաև Սյունիքում, նախատեսում են կառուցել սպանդանոցներ, որոնք կնպաստեն մսի իրացման խնդրի լուծմանը, ինչպես նաև տեղերում պետք է ստեղծվեն վերամշակման փոքր արտադրամասեր, որոնք էապես կթելազանեն գյուղացիների իրացման հոգսերը: Հանդիպման ընթացքում համայնքի բնակիչները ցանկություն են հայտնել ընդգրկվել «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագրում, ինչը հնարավորություն կտա ջրարբիացնել հեռագնա շուրջ 1300 հա արոտները: Նախարարը նշել է, որ ծրագրի պատասխանատուներին արդեն իսկ հանձնարարված է ուսումնասիրություններ իրականացնել խնդրի առկայությանը: Գյուղացիների հետ զրույցում նախարար Կարապետյանը հորդորել է գյուղատնտեսական կոոպերատիվ հիմնել, ինչը թույլ կտա առավել արդյունավետ կազմակերպել աշխատանքները և կնպաստի գյուղացիների եկամուտների ավելացմանը: Նախարարի խոսքով՝ արդեն հանրապետությունում 100-ից ավել կոոպերատիվներ են ստեղծվել, և արդյունքները գոհացուցիչ են: Նախարարը նաև հավաստիացրել է, որ մատչելի գներով սերմացուի, պարարտանյութի, դիզվառելիքի և սուբսիդավորվող վարկերի տրամադրման պետական աջակցության ծրագրերը, ՀՀ Նախագահի հանձնարարությամբ, 2016 թվականին ևս կշարունակվեն:

Այնուհետև նախարարն այցելել է Սյունիքի Ծղուկ համայնքում գործող «Բորիսովկա» ՍՊԸ-ի պանրի արտադրամաս: Ընկերության տնօրենի տեղեկացմամբ, իրենք համագործակցում են մարզի 6 համայնքների ավելի քան 150 ֆերմերների հետ, օրական վերամշակում են 9,000 լիտր կաթ, արտադրում են կարագ և 7 տեսակի պանիրներ, որոնցից 3-ը եվրոպական՝ մոցարելլա, կամամբեր, ռիկոտա: Նրա խոսքով՝ առաջիկայում նախատեսում են ընդլայնել տարածքները և շուրջ երեք անգամ ավելացնել արտադրության ծավալները: Նախարարը գոհունակություն հայտնելով կատարված աշխատանքներից՝ հավելել է, որ ընկերությունը կարող է մասնակցել նաև ՀՀ ԳՆ ԳԾԻԳ ծրագրի արժեշտային զարգացման բաղադրիչի դրամաշնորհային մրցույթին, և պայմաններին բավարարելու դեպքում, ստանալ մինչև 50 հազար ԱՄՆ դոլարի չափով դրամաշնորհ՝ կարողությունների հզորացման, սննդամթերքի անվտանգության հարցերի բարելավման և արտահանման հնարավորությունների ավելացման նպատակով՝ նույն չափով ներդրում իրականացնելու պայմանով:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

Համաշխարհային բանկի և Միջազգային ֆինանսական ընկերակցության պատվիրակությունը Հայաստանում

1 նորագույն տեխնիկայով ապահովելու կարևորությունը՝ նախարարն ընդգծել է, որ այս խնդիրների լուծման ուղղությամբ ակնկալվում է միջազգային կառույցների, այդ թվում՝ նաև Համաշխարհային բանկի աջակցությունը:

Հանդիպման ընթացքում քննարկվել է նաև CARMAC 2 ծրագրի շրջանակում կաթի, մսի, մրգի, բանջարեղենի, բարձրարժեք հատապտղի և մեղրի ոլորտների արտադրողներին, վերամշակողներին և արժեշտային այլ մասնակիցներին աջակցության ցուցաբերելու հարցը:

Ծրագրերի ավագ պատասխանատու Արուսյակ Ալավերդյանն, իր հերթին, գոհունակությամբ նշելով CARMAC 1 ծրագրի արդյունավետությունը՝ հույս է հայտնել, որ երկրորդ ծրագիրը կլինի ավելի արդյունավետ և արդյունքում՝ ոլորտում կհաջողվի գրանցել ավելի բարձր ցուցանիշներ: Աշխատախմբի ղեկավար Բեքզող Համսիլը վստահեցրել է, որ նախարարի կողմից ներկայացված բոլոր առաջարկություններն առաջիկայում կուսումնասիրվեն: Հանդիպմանը քննարկվել են ոլորտին վերաբերող մի շարք այլ հարցեր ևս:

ԾՐԱԳԻՐ

Վերականգնման աշխատանքները շարունակվում են

ՀՀ վարչապետ Հովիվ Աբրահամյանն այցելել է «Արփա-Սևան» թունել՝ տեղում ծանոթանալու թունելի ներկայիս վիճակին և վերականգնման աշխատանքներին ընթացքին:

ՀՀ կառավարության համաֆինանսավորմամբ և Աբու-Դաբիի Չարգացման Հիմնադրամի աջակցությամբ, 2010-2017 թթ. իրականացվում է «Արփա-Սևան» թունելի առավել վթարային հատվածների հիմնանորոգման ծրագիր, որի նպատակն է՝ ապահովել Արփա-Սևան ջրատարի թունելների կայունությունը և անվտանգությունը ջրատարի ուղեծրի ողջ երկարությամբ: Կապալառու կազմակերպությունը «Արփա-Սևան» բաց բաժնետիրական ընկերությունն է: Կառավարության ղեկավարը շրջայց է կատարել «Արփա-Սևան» թունելի տարածքում, ծանոթացել կատարված աշխատանքներին, տեխնիկական վիճակին, առկա խնդիրներին: «Արփա-Սևան» ԲԲԸ գլխավոր տնօրեն Պարույր Հակոբյանը վարչապետին զեկուցել է, որ 2010 թվականից իրականացվող թունելի հիմնանորոգման ծրագրի շրջանակում կատարվել է վթարային վիճակում գտնվող հատվածների հիմնանորոգում և վերականգնում: Նա նշել է, որ ներկայումս աշխատանքների մեծ մասն ավարտված է, և շինարարության ավարտին մնացել է մոտ մեկ տարի: Հովիվ Աբրահամյանին են ներկայացվել նաև թունելի այն տեղանքները, որտեղ վերջին 5-6 տարում ավելի են խորացել փուլուզումները, որոնց վերականգնման անհրաժեշտությունն ևս կա:

Իր հերթին ՀՀ գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահ Արամ Հարությունյանը նշել է, որ, ընդհանուր առմամբ, «Արփա-Սևան» թունելում իրականացվող շինարարական աշխատանքների նպատակը թունելի արտադրողականության բարձրացումն է՝ Սևանա լիճ տեղափոխվող ջրաքանակը կրկնապատկելու համար: Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է թունելի՝ տեխնիկական վիճակից կախված թողունակությունը 13.5 մա/վրկ-ից հասցնել շուրջ 20 մա/վրկ, որը հնարավորություն կտա տարեկան Սևանա լիճ տեղափոխել շուրջ 270 մլն մա ջրաքանակ:

Վարչապետը շրջայցից և տեղում իրավիճակին ծանոթանալուց հետո համապատասխան հանձնարարականներ է տվել պատկան գերատեսչությունների և կապալառու «Արփա-Սևան» ԲԲԸ ղեկավարներին՝ «Արփա-Սևան» թունելի պահպանության և վթարված հատվածների շարունակական աշխատանքների իրականացման վերաբերյալ: «Արփա-Սևան» թունելը կառուցվել է 1963-1981 թթ.՝ Արփա և Եղեգիս գետերի ջրերը Սևանա լիճ տեղափոխելու նպատակով: Թունելի ընդհանուր երկարությունը 48.3 կմ է, որի առանձին հատվածներ գտնվում են խիստ վթարավտանգ իրավիճակում: Վերականգնողական շինարարական աշխատանքներն ընդգրկում են թունելի կամ նրա մի մասի (հատակ) երեսարկների դեֆորմացված հատվածների վերականգնումը:

ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«Բեկոն պրոդուկտ» ընկերությունը 20 տարեկան է

Վարչապետ Հովիվ Աբրահամյանն այցելել է մասմթերքի և կիսաֆաբրիկատների արտադրությամբ զբաղվող «Բեկոն պրոդուկտ» ընկերություն: Այս տարի լրանում է ընկերության գործունեության 20-ամյակը: Ընկերության ղեկավարությունը վարչապետին է ներկայացրել 20 տարվա ընթացքում կատարված աշխատանքները, արձանագրված ձեռքբերումները, արտահանման և զարգացման նոր ծրագրերը:

Վարչապետը կարևորել է արտադրանքի որակը և նշել, որ ընկերությունն ունի արտադրանքի իրացման և արտահանման ծավալի ավելացման, ինչպես նաև շուկայի ընդլայնման մեծ ներուժ և տեխնիկական հնարավորություններ: «Կառավարությունը եղել և մնալու է հայրենական արտադրողի կողքին, շարունակելու է աջակցել, որպեսզի միասին կարողանանք զարգացնել մեր երկրի տնտեսությունը»,- նշել է Հ. Աբրահամյանը: Վարչապետը շնորհավորել է «Բեկոն պրոդուկտ»-ի ղեկավարությանը և աշխատակազմին գործունեության 20-ամյակի առթիվ և կառավարության անունից զարգացման ծրագրերին աջակցելու պատրաստակամություն հայտնել:

1995 թ. հիմնադրված «Բեկոն պրոդուկտ» ՍՊԸ-ն համապատասխանում է ՀՀ կառավարության մի շարք որոշումների, Մսի և մսամթերքի տեխնիկական կանոնակարգի պահանջներին և Ստանդարտների ազգային ինստիտուտի կողմից ստացել է համապատասխանության սերտիֆիկատ: Ընկերությունում կատարվում են HACCP որակի կառավարման համակարգի ներդրման աշխատանքներ: Արտադրության հիմնական ուղղություններն են՝ երշիկներ, նրբերշիկներ, նրբախորտիկներ, կիսաֆաբրիկատներ, ինչպես նաև խտալական և խսպանական երշիկեղենի տեսակներ: Վերջին 10 տարում ձեռնարկությունում կատարվել է շուրջ 2.316912 ԱՄՆ դոլարին համարժեք ներդրում: Ձեռնարկության աշխատողների միջին թվաքանակը կազմում է 191 մարդ, միջին աշխատավարձը՝ 127600 ՀՀ դրամ:

ԾՐԱԳՐԵՐ

2016 Թ. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾՈՎ ԸՆԴ ԳՆ ԿՈՂՄԻՑ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԾՐԱԳՐԵՐ

ՀՀ Ազգային Ժողովի մշտական հանձնաժողովների հարգարժան նախագահներ

Հարգելի գործընկերներ, 2016 թ. համար գյուղատնտեսության նախարարության կողմից իրականացվող ծրագրերին ՀՀ պետական բյուջեի նախագծով նախատեսված է հատկացնել 14 մլրդ 404 հազար դրամ, որից՝ 8 մլրդ 176 մլն դրամ բյուջետային ծրագրերի և նախարարության ապարատի պահպանության համար, իսկ վարկային ծրագրերին նախատեսվում է ուղղել 5 մլրդ 825 մլն դրամ: Ընդ որում, բյուջետային ծրագրերի և նախարարության ապարատի պահպանության ծախսերը մնացել են անփոփոխ, նախատեսված միջոցների ավելացումը պայմանավորված է վարկային ծրագրերին հատկացվող միջոցների աճով:

2016 թվականին գյուղատնտեսության ոլորտում քաղաքականությունն ուղղվելու է գյուղատնտեսությունում տնտեսավարողների գործունեության համար բարենպաստ պայմանների ստեղծմանը, մասնավորապես՝ բարձրորակ սերմերով ապահովմանը, բույսերի պաշտպանությանը, անասնաբուժական հակահամաճարակային միջոցառումների իրականացմանը, գյուղատնտեսությունում օգտագործվող հիմնական ռեսուրսների՝ հանքային պարարտանյութերի, դիզելային վառելանյութի և վարկերի մատչելիությանը: Հետևողական աշխատանքներ կիրականացվեն բարձր լեռնային և սահմանամերձ բնակավայրերում նպատակային ծրագրերի համաֆինանսավորման միջոցով՝ ագրարային ոլորտում տարբեր տնտեսավարման ձևերի զարգացման, բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործման ուղղությամբ: Ընդհանուր առմամբ, 2016 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է իրականացնել գյուղատնտեսության ոլորտի կայունությունն ապահովող և զարգացման նախադրյալներին ուղղված հետևյալ ծրագրերը:

Գյուղատնտեսության նախարարի և նախարարության աշխատակազմերի պահպանման ծախսերի իրականացման համար պետական բյուջեի նախագծով նախատեսվում է 638 մլն 916 հազար դրամի ընթացիկ ծախսերի իրականացում, որն ուղղվում է նախարարի և նախարարության աշխատակազմի պահպանությանը:

Ըստ առանձին ծրագրերի՝ նախատեսվում է հետևյալ աշխատանքների իրականացումը՝

Բուսաբուժական մթերքների երաշխավորված բերքի ստացման նախադրյալների ստեղծման և ուղղվում «Սերմերի որակի ստուգման ու պետական սորտափորձարկման միջոցառումների ծրագիրը»: Ծրագրի իրականացման և նախատեսվում ուղղել 59 մլն 107 հազար դրամ: Ծրագրի իրագործումը հնարավորություն է ընձեռում կանխել գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային ցածր որակ ունեցող սերմերի և տնկանյութի օգտագործումը և ապահովել կոնդիցիոն սերմերի վերարտադրությունը, ինչպես նաև բույսերի նոր սորտերի կազմի ընդլայնումը՝ սորտափորձարկման միջոցով:

Հանրապետությունում գյուղատնտեսական մշակաբույսերի երաշխավորված բերքի ապահովման և կայուն բուսասանիտարական վիճակի ստեղծման համար կարևորվում է «Բույսերի պաշտպանության միջոցա-

ռումների ծրագիրը»: Ծրագրի իրականացմանը նախատեսվում է ուղղել 150 մլն դրամ: Ծրագիրը ներառում է անտառի վնասատուների և հիվանդությունների դեմ, ինչպես նաև վնասատուների և մորեխների դեմ պայքարի աշխատանքների իրականացումը ավիացիայի միջոցով, շուրջ 83 հազ. հա տարածության վրա: Նշված ծրագիրը շարունակական է, և ծրագրի իրականացումը նախորդ տարիներին տվել է դրական արդյունք:

Ագրոտեխնիկական պահանջներով պարարտանյութերի օգտագործման նպատակով և երաշխավորված բերքատվության ապահովման նախադրյալների ստեղծման համար կարևորվում է «Հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրիության բարձրացման միջոցառումների ծրագիրը»: Ծրագրի իրականացմանը նախատեսվում է ուղղել 71 մլն 337 հազար դրամ: Նախատեսվում է 75 հազ. հեկտար գյուղատնտեսական նշանակության հողատարածքների վրա ագրոքիմիական դաշտային հետազոտությունների իրականացում: Կիրականացվի 64 հազ. փորձանուշների լաբորատոր փորձաքննություն: Կկազմվի և 170 համայնքների կհանձնվի ագրոքիմիական քարտեզներ ու մշակաբույսերի պարարտացման գի-



տականորեն հիմնավորված երաշխավորագրեր:

«Գյուղատնտեսական կենդանիների պատվաստումների ծրագիր» իրականացմանը նախատեսվում է ուղղել 1 մլրդ 214 մլն դրամ: Այդ թվում՝ պատվաստումների, ախտորոշիչ և ախտահանիչ նյութերի ձեռք բերմանը կուղղվի 594 մլն դրամ, իսկ համայնքներում գործող 650 անասնաբույժների վարձատրությանը՝ 620 մլն 476 հազար դրամ: Կիրականացվեն գյուղատնտեսական կենդանիների առավել վտանգավոր հիվանդությունների 8 կանխարգելիչ և 2 ախտորոշիչ միջոցառում: Ընդհանուր առմամբ՝ կիրականացվի շուրջ 9 մլն կանխարգելիչ և ախտորոշիչ միջոցառում: «Գյուղական խորհրդատվական ծառայություններ ծրագիր»: Վերջինիս իրականացմանը նախատեսվում է ուղղել 397 մլն 299 հազ. դրամ:

Ծրագրի շրջանակներում կիրականացվեն հետևյալ միջոցառումները. հանրապետության մարզերում ագրարային ոլորտի տնտեսավարող սուբյեկտներին մասնագիտական խորհրդատվությամբ ապահովում, նոր տեխնոլոգիաների գնահատման և ցուցադրական ծրագրերի իրականացում, դաշտային ուսուցումների

և փորձացուցադրական աշխատանքների կազմակերպում, լրատվական և տեղեկատվական, մարքեթինգային խորհրդատվական ծառայությունների մատուցում:

Գյուղատնտեսական մշակաբույսերի առավել վտանգավոր և կարանտին հիվանդությունների դեմ պայքարի, ինչպես նաև անասնաբուժական հակահամաճարակային միջոցառումների մշակման համար կարևորվում է «Անասնաբուժասանիտարիայի, սննդամթերքի անվտանգության և բուսասանիտարիայի ոլորտներում ծառայությունների մատուցում» ծրագիրը, որի իրականացմանը նախատեսվում է ուղղել 135 մլն 239 հազ. դրամ և ակնկալվում է իրականացնել հետևյալ միջոցառումները. հանրապետությունում կարանտին և առավել վնասակար օրգանիզմներով վարակվածության արեալի ճշտում, գյուղատնտեսական նշանակության հողատեսքերում կատարված դիտարկումների իրականացում 250.0 հազ. հեկտարի վրա: Կենդանիների վարակիչ հիվանդությունների նկատմամբ կայուն անասնաբուժական վիճակի ապահովում, կենդանիների և մարդու համար ընդհանուր վարակիչ հիվանդություններից բնակչության պաշտպանություն հանրապետության 915 համայնքներում: «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի» շարունակում:

Ծրագրի իրականացմանը նախատեսվում է ուղղել 1 մլրդ 163 մլն դրամ:

Վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորումը կիրականացվի հանրապետության 915 համայնքներում: Կուբսիդավորվի վարկերի տոկոսադրույքի 6 տոկոսային կետին համարժեք մասը: Վարկերը տրամադրվում են հայկական դրամով, բացի տոկոսադրույքի մատչելի լինելուց ծրագրով սահմանված է նաև այլ արտոնյալ պայմաններ՝ ինչպես մայր գումարի, այնպես էլ տոկոսադրույքի վճարման համար սահմանված է արտոնյալ ժամկետ՝ առնվազն 6 ամիս: Ծրագրի իրականացմամբ, վարկերի մատչելիության բարձրացումը հնարավորություն կտա լուծել գյուղատնտեսությունում տնտեսավարողների առջև ծառայած մի շարք խնդիրներ, նախադրյալներ կստեղծվեն արտադրության ծավալների ավելացման և ոլորտի զարգացման համար:

2016 թվականին շարունակվելու է «Անտառապահպանական աշխատանքների ծրագիրը»: Ծրագրի իրականացմանը նախատեսվում է ուղղել 1 մլրդ 201 մլն դրամ: Կիրականացվի ավելի քան 344 հազ. հեկտար անտառային տարածքների պահպանություն:

Պետական բյուջեով նախատեսված միջոցներն ամբողջությամբ կուղղվեն անտառային տնտեսության աշխատողներին աշխատավարձի ապահովմանը: Վերջին տարիներին, ծրագրերի իրականացման արդյունքում, էականորեն կրճատվել են անտառների ապօրինի հատումները և անտառային հրդեհները:

«Անտառային պետական մոնիթորինգի իրականացման ծրագիր»: Վերջինիս նախատեսում է ուղղել 54 մլն 656 հազ. դրամ: Ծրագիրն ուղղված է հանրապետությունում անտառների ապօրինի հատումների, բնափայտի անօրինական տեղափոխման, իրացման, անտառածածկ տարածքների,

բնափայտի պաշարների, անտառների ու անտառային հողերի քանակական ու որակական փոփոխությունների, անտառվերականգնման, անտառային հրդեհների, հիվանդությունների և վնասատուների տարածվածության և բացասական այլ գործողությունների վերաբերյալ տվյալների հավաքագրմանը: Ծրագրով նախատեսվում է իրականացնել 300.0 հազ. հա անտառային տարածքների, ինչպես նաև 70.0 հազ. հա արգելոցների ու ազգային պարկերի ուսումնասիրություններ և դիտարկումներ: 2016 թվականին կարևորվելու են նաև գյուղատնտեսությունում օգտագործվող կարևորագույն ռեսուրսների մատչելիության բարձրացման ծրագրերը: Այս ուղղությամբ իրականացվելու է՝

«Պետական աջակցություն գյուղատնտեսական հողօգտագործողներին՝ մատչելի գներով ազոտական, ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերի ձեռք բերման ծրագիրը»:

Վերջինիս իրականացմանը նախատեսվում է ուղղել 2 մլրդ 760 մլն դրամի, սուբսիդիա: Հաշվարկը կատարված է՝ հիմք ընդունելով 2015 թ. իրականացված ծրագրի ծավալները, որոնք, սակայն, ՀՀ մարզպետարաններից ներկայացված վճարունակ պահանջարկի հիման վրա, կարող են փոփոխության ենթարկվել: Ներկայումս հանրապետության մարզպետարաններից պահանջարկը ճշգրտվում է:

Ծրագրով նախատեսվում է գյուղատնտեսական հողօգտագործողներին, մատչելի գներով, ապահովել վճարունակ ամբողջ պահանջարկը ազոտական, ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերի նկատմամբ, ընդ որում՝ ազոտական պարարտանյութի 50 կգ մեկ պարկը կտրամադրվի 6000 դրամով, իսկ ֆոսֆորական և կալիումականը՝ 7000-ական դրամով:

Ծրագրից հնարավորություն ունեն օգտվելու հանրապետության բոլոր հողօգտագործողները: Ռեսուրսների մատչելիությանն ուղղված հաջորդ ծրագիրը «Պետական աջակցություն գյուղատնտեսական հողօգտագործողներին մատչելի գներով դիզելային վառելանյութի ձեռք բերման ծրագիրն» է:

Վերջինիս իրականացմանը նախատեսվում է ուղղել 330 մլն դրամի սուբսիդիա:

Ծրագրով նախատեսվում է գյուղատնտեսական հողօգտագործողներին, շուկայականից ցածր գներով, դիզելային վառելանյութի վճարունակ պահանջարկի ամբողջական բավարարում: Տվյալ ծրագրից նույնպես հնարավորություն ունեն օգտվելու հանրապետության գյուղատնտեսությունում բոլոր տնտեսավարողները:

Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում, ազոտական, ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերի, դիզելային վառելանյութի ձեռք բերման երեք ծրագրերի գծով՝ 2016 թվականի բյուջեի նախագծով, նախատեսվում է հատկացնել շուրջ 4 մլրդ 253 մլն դրամի սուբսիդիա:

Նշվածից բացի, հանրապետության անասնապահության զարգացման համար կարևորվում են «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» առաջին և երկրորդ վարկային ծրագրերը: Ընդհանուր առմամբ, վարկային ծրագրերին 2016 թվականին նախատեսվում է ուղղել 5 մլրդ 825 մլն դրամի միջոցներ:

ԾՐԱԳՐԵՐ

2016 Թ. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾՈՎ ՀՀ ԳՆ ԿՈՂՄԻՑ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԾՐԱԳՐԵՐ

3

Առաջին ծրագիրն ավարտվում է 2016թ. ընթացքում և տվյալ տարում նախատեսվում է հատկացնել 964 մլն 105 հազ. դրամ:

Ծրագրի նպատակն է՝ աջակցել անասնապահական ուղղվածություն ունեցող բարձր լեռնային և սահմանամերձ համայնքներին՝ հեռագնա արտոների անցանելիության ապահովման, ջրարբիացման, դեզարդացված արտոների վերականգնման, ինչպես նաև՝ կաթի ընդունման և վերամշակման կարողությունների ստեղծման միջոցով:

Ընդհանուր առմամբ, տվյալ ծրագրի շրջանակներում հանրապետության 6 մարզի 91 համայնքում հիմնադրվել են «Համայնքի արտոագործողների միավորում» սպառողական կոոպերատիվներ: 74 համայնքում ավարտվել են արտավայրերի ջրարբիացման համակարգերի շինարարական աշխատանքները (կառուցվել է 184 կմ ջրագիծ, տեղակայվել է 229 խմոց), կոոպերատիվներին տրամադրվել է 664 միավոր գյուղտեխնիկա, այդ թվում՝ 143 անիվավոր տրակտոր: Ծրագրի իրականացումը նպաստում է բնական կերհանդակների օգտագործման արդյունավետության բարձրացմանը, անասնապահության զարգացմանը, տնտեսությունների եկամուտների

ավելացմանը: Ծրագիրը խթանում է նաև գյուղատնտեսությունում կոոպերացիայի զարգացմանը: Հաշվարկները ցույց են տալիս, որ ծրագրի շրջանակներում համայնքներում ներդրված միջոցները կարճ ժամանակահատվածում փոխհատուցվում են ավել արտադրված անասնապահական արտադրանքի արժեքով: 2015թ. մեկնարկել և 2016թ. շարունակվելու է «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության երկրորդ ծրագիրը»:

Ծրագրի իրականացման համար 2016թ. նախատեսվում է հատկացնել 4 մլրդ 696 մլն դրամ: Ծրագիրը կշարունակի համայնքներում իրականացնել արտոների արդյունավետ կառավարման և անասնապահության զարգացման ուղղված ծրագրերը, որոնք իրականացվում են հանրապետության 8 մարզում: Նախատեսված է մինչև 2019թ. ծրագիրն իրականացնել 100 համայնքում: 2016թ. նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները: 40 համայնքում կհիմնադրվեն «Համայնքի արտոագործողների միավորում» սպառողական կոոպերատիվներ, 47 համայնքում կիրականացվեն արտավայրերի ջրարբիացման համակարգերի շինարարական աշխատանքներ: Կջրարբիացվի շուրջ 75

հազ. հա արտո: Հիսունհինգ համայնքի արտոագործողների միավորում սպառողական կոոպերատիվներին կտրամադրվի շուրջ 200 միավոր գյուղտեխնիկա, այդ թվում՝ շուրջ 45 անիվավոր տրակտոր:

Ծրագրի շրջանակներում իրականացվելու են նաև արժեշղթայի զարգացման ուղղված ծրագրեր, որոնք կնպաստեն գյուղատնտեսական մթերքների արտադրության, վերամշակման, իրացման խնդիրների լուծմանը: Նշվածի հետ մեկտեղ, ՀՀ պետական բյուջեի միջոցներով, նախատեսված ծրագրերից բացի, կիրականացվեն նաև այլ ծրագրեր և միջոցառումներ՝ ուղղված ոլորտի առջև ծառայած հետևյալ առաջնահերթ խնդիրների լուծմանը:

\* Հողային ռեսուրսների նպատակային օգտագործման մակարդակի բարձրացմանը:

\* Հացահատիկային և կերային մշակաբույսերի սերմնաբուծությանը և սերմնապահովությանը:

\* Անասնաբուծության տոհմային գործի կազմակերպմանը, մասնավորապես՝ գյուղատնտեսական կենդանիների տոհմային և մթերատու հատկանիշների բարելավմանը:

\* Տնտեսավարման ձևերի կատարելագործմանը, մասնավորապես՝ գյուղատնտեսությունում՝ կոոպերացիայի,

տնտեսավարողների համատեղ գործունեության խթանման մեխանիզմների ներդրման միջոցով, արտադրության արդյունավետության բարձրացմանը, «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» ՀՀ օրենքի ընդունմանը:

\* Գյուղատնտեսությունում արդիական տեխնոլոգիաների ներդրմանը, մասնավորապես՝ կաթիլային ոռոգման, կարկտապաշտման ցանցաշերտերի կիրառմանը, ինտենսիվ այգիների հիմնմանը:

\* Գյուղատնտեսության տեխնիկական հագեցվածությանը, մասնավորապես՝ մատչելի պայմաններով գյուղատնտեսական տեխնիկայի մատակարարման աշխատանքների շարունակմանը:

Հակիրճ ներկայացվեցին՝ 2016 թվականի ՀՀ պետական բյուջեի նախագծով ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից իրականացման համար նախատեսված առաջնահերթ անհրաժեշտ ծրագրերը, որոնք կնպաստակառուցվեն գյուղատնտեսությունում տնտեսավարողների գործունեության համար բարենպաստ պայմանների ստեղծմանը, ճյուղի մրցունակության բարձրացմանը, արդյունքում՝ ոլորտի կայունացմանն ու զարգացմանը, պարենային անվտանգության ապահովմանը:

ԸՆԴԴԵՄ ԽՈՋԵՐԻ ԱՅՐԻԿՅԱՆ ԺԱՆՏԱԽՏԻ

«Գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանի հանձնարարությանը սպեցիալ է մասնագետների խումբ (ղեկավար՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարություն աշխատակազմի անասնաբուծության և անասնաբուծության վարչության պետ Թաթուլ Սարգսյան), որը, TAP-



AI ծրագրի շրջանակներում, Կրասնի, Ուկրաինայի և Ղազախստանի Հանրապետությունների համապարասխան կառույցների մասնագետների հետ համատեղ, կմշակվի խոզերի աֆրիկյան ժանտախտի հիվանդության հսկողության գործողությունների իրականացման ընդհանուր ռազմավարություն:

Ծրագիրն իրականացնում է ԱՄՆ-ի պաշտպանության դեպարտամենտի սպանալիքների նվազեցման գործակալությունը՝ համագործակցելով ընդգրկված հանրապետությունների կառավարությունների հետ: Փետրվարի 3-ից մեկնարկված ծրագիրն իր աշխատանքները շարունակել է Ալմա Աթայում, Լվովում և կավարտի այն Թբիլիսիում: Այն ուղղված է խոզերի աֆրիկյան ժանտախտ հիվանդության վերահսկման, կանխարգելման, և համաճարակաբանության վերաբեր-

յալ հանրային իրազեկմանը: Ծրագրի շրջանակում իրականացվել են ուսուցողական սեմինարներ, որին մասնակցել են շուրջ 400 անասնաբույժ մասնագետներ, համաճարակաբաններ, տեսուչներ և մարզային կառույցների մասնագետներ: Նրանցից ընտրվել են թեստային առաջադրանքները լավագույնս կատարած 20 մասնագետները, որոնք, իրենց հերթին, ուսուցանել են հանրապետությունում անասնաբուծական ծառայություն մատուցող համապատասխան մասնագետներին: Վերջիններս էլ տեղեկատվությունը փոխանցել են խոզաբուծությանը զբաղվող ֆերմերներին:

«Հաշվի առնելով այն հանգամանքը, որ յուրաքանչյուր հիվանդության դեմ պայքարի արդյունավետությունը կախված է կանխարգելման աշխատանքները ճիշտ և ժամանակին իրականացնելուց՝ նախատեսվում է խոզերի աֆրիկյան ժանտախտի հիվանդության նկատմամբ պայքարի գործընթացին մասնակից դարձնել հանրապետությունում խոզաբուծությանը զբաղվող շահառուներին, ինչպես նաև որսորդներին և անտառապահներին, քանի որ նրանք անմիջականորեն շփվում են վայրի և ընտանի խոզերի հետ, հետևաբար նաև տիրապետում են այն նախնական տեղեկատվությանը, որն անհրաժեշտ է հիվանդությունը ժամանակին կանխարգելելու համար», - նշում է Թաթուլ Ստեփանյանը:

Բացի ուսուցման դասընթացներից, կազմվել և տպվել են 300 պոստերներ և 3000 տեղեկատվական թերթիկներ, որոնք անասնաբույժ մասնագետների միջոցով բաժանվել են խոզաբուծությանը զբաղվող ֆերմերային տնտեսություններին, փակցվել են համայնքներում և գյուղատնտեսության հետ կապ ունեցող հասարակական վայրերում, ինչպես նաև՝ անասնաբուծական դեղատներում: Նեյլի Սահակյան

ԿՐԹԱԿԱՆ ՀՆՈՒԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ 85-ՐԴ ՀԱՄԱԼՐՈՒՄԸ

Հայաստանի ազգային ագրարային համալսարանը 85-րդ անգամ իր հյուրընկալ դռները բացեց հեռակա ուսուցման առաջին կուրսեցիների առջև: Այդ կապակցությամբ մեծ դահլիճում տեղի ունեցավ հանդիսավոր արարողություն, որը բացեց 2015-16 ու. տարվա ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղար Հայկ Մկրտչյանը: Նա հակիրճ շնորհավորեց առաջին կուրսեցիներին՝ մաղթելով նրանց կանաչ ճանապարհի և հաջողություններ:

Առավել ընդարձակ ելույթ ունեցավ հեռակա ուսուցման դեպարտամենտի պետ, պրոֆեսոր Դանիել Պետրոսյանը: «Սիրելի առաջին կուրսեցիներ, դուք ընդունվել եք Հայաստանի Հանրապետության խոշոր և անվանի բուհերից մեկը, որը միակն է ագրարային ոլորտի համար կարգեր պատրաստելու առումով: Համալսարանն ունի միջազգային լայն ճանաչում. իր բարձրորակ կադրերով և գիտական կարևոր հետազոտություններով հայտնի է ԱՄՆ-ում, Եվրոպայում և Ռուսաստանում: Իսկ օրեր առաջ, համալսարանի 85-ամյակի հոբելյանական միջոցառումների շրջանակներում, փոխհամագործակցության նոր համաձայնագրեր ստորագրվեցին Եվրոպական և ռուսաստանյան տարբեր բուհերի հետ»: Նա այնուհետև անդրադարձավ համալսարանի անցած ուղուն, ձեռքբերումներին: Համալսարան, որի ներկայիս պրոֆեսորադասախոսական կազմից 32-ը՝ գիտության վաստակավոր գործիչներ են, հարյուրավորները՝ դոկտոր, պրոֆեսորներ: «Համալսարանում գործում է ագրոբիզնեսի ուսուցման կենտրոնը. այն ուսուցման մի օղակ է, որն ագրարային ոլորտի մասնագետներ է պատրաստում բացառապես օտար լեզվով, և որի ավարտական դիպլոմը գործում է

նաև արտերկրում: Մեր համալսարանն ունի տեխնիկական և տեխնոլոգիական հզոր բազա, անհրաժեշտ գրականությանը հագեցած գրադարան, ընթերցարաններ», - նշել է Դ. Պետրոսյանն ու անդրադարձել համալսարանի՝ որոշ մասնագիտությունների գծով առանց քննությունների ընդունելության գործընթացին: Ընդունվածները, որպես ուսանող կիրամանագրվեն, միայն ուսման վարձի 50 %-ը վճարելու դեպքում: Ի դեպ ուսման վարձերի մասին. ինչպես ասաց Դ. Պետրոսյանը, ուսման վարձավճարների զեղչման կարևոր պայմաններից մեկը բարձր առաջադիմությունն է:

Առաջին կուրսեցիներին ողջունել է նաև ագրոբիզնեսի ամբիոնի պրոֆեսոր Գ. Դավթյանը, ով դիմելով առաջին կուրսեցիներին, ասել է. «Համալսարանն իր բոլոր կարգավիճակներում խիստ ուշադիր է եղել հեռակա ուսուցման ուսանողների հանդեպ: Մենք ունենք հեռակա ուսուցման դեպարտամենտն ավարտած անվանի գիտնականներ, ամբիոնների վարիչներ: Չկա ոչ մի տարբերություն հեռակա և առկա ուսուցման ձևերի մեջ: Իմացեք մի բան, սիրելի առաջին կուրսեցիներ, ձեր ուսումը, գիտելիքների ձեռք բերումը մասնավոր գործ չէ, այլ հասարակական հարց: Հիշեք, որ ձեր ծնողները վճարելու են ձեր ուսման համար, աշխատեք դառնալ կրթված և գիտելիքներով հարուստ մասնագետներ: Եղեք կարգապահ. որտեղ չկա կարգ ու կանոն, չի կարող լինել աշխատանքի կամ ուսման արդյունավետություն»:

Հանդիսավոր արարողությունից հետո առաջին կուրս ընդունվածներն ըստ մասնագիտությունների՝ իրենց գործավարների և դեպարտամենտի տեղակալների միջոցով, առավել մանրամասն կծանոթանան համալսարանում գործող կանոնակարգերին, իրենց իրավունքներին ու պարտականություններին և կանցնեն ուսումնական պարամունքներին: Բարի երթ ձեզ, սիրելի առաջին կուրսեցիներ: www.anau.am

ԱՍՈՒԼԻՍ

ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ ԵՆ  
ԱՆՏԱՌՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ  
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

«Հայանտառ» ՊՈԱԿ-ի տնօրեն Մարտուն Մաթևոսյանը մամուլի ասուլիսի ընթացքում ներկայացրել է անտառվերականգնման և անտառապատման ուղղությամբ իրականացվող աշխատանքները, ինչպես նաև՝ այս ոլորտում առաջիկայում նախատեսվող ծրագրերը:



Ըստ նրա՝ 2004-2014 թթ. հանրապետությունում իրականացվել են անտառվերականգնման աշխատանքներ՝ շուրջ 31,500 հեկտար տարածքում, այդ թվում՝ մոտ 3591 հա անտառապատում և ավելի քան 27,800 հա անտառվերականգնում: Ներկայումս անտառվերականգնման և անտառապատման աշխատանքներ են իրականացվել 175 հեկտար տարածքում: «Հայանտառ»-ի տնկարաններից մոտ 200 հազար հատ տնկանյութ անհատույց տրամադրվել է մարզպետարաններին, քաղաքապետարաններին, համայնքներին և «անտառտնտեսության» մասնաճյուղերին: Տնկումներն իրականացվել են ինչպես անտառամերձ, այնպես էլ՝ համայնքների տարածքներում:

Մ. Մաթևոսյանն անդրադարձել է նաև 2015 թվականի հունիսի 18-ին «Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի» կողմից հաստատված «Հողերի և անտառի կայուն կառավարման ներդրումը հյուսիս-արևելյան Հայաստանի չոր լեռնային լանդշաֆտներում» ծրագրին, որի շրջանակում 2015-2019 թթ. Լոռու և Տավուշի մարզերում նախատեսվում է իրականացնել անտառվերականգնման աշխատանքներ՝ 4600 հեկտար անտառային տարածքներում: Տնօրենը նաև տեղեկացրել է, որ ընթացիկ տարվա 10 ամիսների ընթացքում մթերվել է 24 հազար մ<sup>3</sup> փայտանյութ, իսկ անտառամերձ տարածքների բնակիչներին անվճար տրամադրվել է ավելի քան 36 հազար խորանարդ մետր թափուկ:

Անդրադառնալով ապօրինի ծառահատումների դեպքերին՝ Մարտուն Մաթևոսյանը հայտնել է, որ 2015 թվականին ապօրինաբար հատվել է 1273 ծառ, որի համար բազմաթիվ քաղաքացիներ ենթարկվել են օրենքով սահմանված պատասխանատվության, ընդ որում, 2004 թվականին այդ ցուցանիշը կազմել էր ավելի քան 32.700 ծառ: Մարտուն Մաթևոսյանը նշել է, որ, այս առումով, ավելի կարևորվում են ապօրինի հատումներ ծնող պատճառների վերացման ուղղությամբ տարվող աշխատանքները: Նրա խոսքով՝ սահմանամերձ և անտառամերձ համայնքներում հիմնական վառելիքը փայտն է, ուստի պետք է մարդկանց սովորեցնել, ինչպես վառելափայտ ստանալ՝ անտառին քիչ վնաս հասցնելով:

ԱՌԱՋԱՎՈՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

ՄԻԱԿԸ՝ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ

«Սիմիրամ» ՍՊԸ ճագարաբուծական տնտեսությունը, նորագույն տեխնոլոգիաների կիրառման և կենդանիների լավագույն պահվածքի առումով, միակն է տարածաշրջանում: Ընկերությունն ընդամենը 4 տարվա պատմություն ունի (հիմնադրվել է 2011 թ. նոյեմբերին, Երևանում), բայց տոհմային մաքրացող ճագարների բուծման գծով արդեն ունի լայն ճանաչում, և ամենակարևորը՝ ճագարաբուծությունն այստեղ դրված է գիտական հիմքի վրա:

Ընկերության հիմնադիր-տնօրեն Տիգրան Ղարիբյանը մասնագիտությամբ իրավաբան է: Տարիներ առաջ սկսեց հետաքրքրվել գյուղատնտեսությամբ, մասնագետների հետ խորհրդակցելուց հետո նախընտրեց զբաղվել ճագարաբուծությամբ, քանի որ այդ ուղղությամբ դեռևս չկային կայացած խոշոր տնտեսություններ, որտեղ և բուծվեին մաքրացող կենդանիներ: Տնտեսության ձևավորման գործընթացում ներգրավվեցին երիտասարդ մասնագետներ, ովքեր քաջատեղյակ էին ճագարների խնամքի աշխարհում գոյություն ունեցող առաջադեմ տեխնոլոգիաներին: Մանրակրկիտ ուսումնասիրություններից հետո, հավանություն տվեցին Միխաիլովյան տեխնոլոգիային, որը մշակվել է Սանկտ-Պետերբուրգում, և ներդրեցին այն: Վերջինս աչքի է ընկնում մի շարք առավելություններով: Կենդանիները պահվում են բաց տարածքում, բները տեղադրվում են դրսում: «Յուրաքանչյուր բույն ունի գազերի և արտաթորանքի հեռացման հնարավորություն: Մաքուր պահվածքի պայմաններում, ճագարի մսից որևէ հոտ չի գալիս: Բները, մանավանդ

ավելացել են նորգելանդական և կալիֆորնիական ցեղերը, որոնք ներկրվել են Ուկրաինայից: Բույրն էլ մսա-մորթատու են: Սեռահասուն կենդանիների քաշը հասնում է 6 կգ-ի: Ներկրված կենդանիները, սկզբնական շրջանում, ենթարկ-



վում են կարանտին պահվածքի, այնուհետև՝ տեղափոխվում ֆերմա:

Տնտեսությունում կենդանիների սելեկցիան (ընտրասերումը) դրված է առաջին պլանում: Յուրաքանչյուր կենդանի ունի ծննդյան վկայական, որում նշված են ոչ միայն տվյալ ճագարի, այլև՝ վերջինիս նախնիների տվյալները: Դա նպաստում է, որպեսզի բացառվի ճագարների ազգակցական բուծումը: Ներկայացված են նաև տեղեկություններ՝ կատարված բուժկանխարգելիչ միջոցառումների վերաբերյալ: Ծագարների տոհմային գործի վարման ողջ գործընթացը կար-

խմբի վիտամիններ, կալիումի աղ, ֆոսֆոր, մագնեզիում և հանքային նյութեր: Միսն աչքի է ընկնում նաև խոլեստերինի ցածր պարունակությամբ՝ ընդամենը 25 մգ՝ 100 գրամ մսի մեջ: Տնօրենի տեղեկացմամբ, ընկերությունում քայլեր են

կատարվում նաև մսի փաթեթավորման, արտադրանքի ապրանքային տեսքի էլ ավելի բարելավման ուղղությամբ, քանի որ գնալով մեծանում է պահանջարկը ճագարի մսի վերաբերյալ:

Գաղտնիք չէ, որ մսի որակական հատկանիշների վրա էական ազդեցություն ունի նաև կենդանիների կերակրումը, իսկ դրա համար այստեղ ջանքեր չեն խնայվում: Տեղում ստեղծել են կերի փոքր արտադրամաս և կենդանիների կերը պատրաստում են իրենց բաղադրատոմսով՝ առանց որևէ հավելանյութի: Ի դեպ, այստեղ պատրաստվում են նաև խոզերի և թռչունների կերեր, որոնք առաջարկվում են ֆերմերային տնտեսություններին: Տնօրենի տեղեկացմամբ, կերի, հետևաբար՝ նաև մսի ինքնարժեքի իջեցման նպատակով կազմակերպում են հացահատիկային մշակաբույսերի ցանք, նախատեսել են ավելացնել ծավալները: Տնտեսությունում գործում է նաև մորթու մշակման արտադրամաս, ստացված մորթիներից կարվում են որակյալ մուշտակներ:

Նշենք նաև, որ «Սիմիրամ» ընկերությունում իրենց ուսումնական պրակտիկան են անցկացնում համապատասխան մասնագիտության ուսանողները, ովքեր այստեղ ձեռք են բերում գիտելիքների մեծ փորձ ու հմտություն: Բացի այդ, ընկերությունը բարձրարժեք կենդանիներ է մատակարարում գործող կամ նորաստեղծ ճագարաբուծական ֆերմերային տնտեսություններին, աջակցելով նրանց կայացման գործընթացում, նաև ապահովում են մասնագիտական խորհրդատվություն՝ կազմակերպելով փոխայցեր:

Յավոք, տնտեսությունը, որտեղ տոհմային գործը վարվում է մասնագիտորեն բարձր մակարդակով, դեռևս չունի տոհմային կարգավիճակ: Մինչդեռ ցուցադրական այս տնտեսությունը միակն է տարածաշրջանում, որը նաև մեր երկրի հպարտությունն է՝ աշխատանքի կազմակերպման օրինակելի փորձի առումով:

Նելլի Սահակյան



ծնից հետո, մշտապես լվացվում և ախտահանվում են», - պատմում է ֆերմայի գլխավոր անասնաբույժ-անասնաբույժ Հարություն Համբարյանը:

Սկսել են 36 գլուխ մայր ճագարից: Սկզբում բերվել են երկու՝ սպիտակ հսկա և արծաթափայլ ցեղատեսակները, որոնք սկսել են արագորեն բազմանալ: Յուրաքանչյուր տարի մեկ ճագարից ստացվում է 3,5 - 4 ծին, միջինը՝ 1 ծնի ընթացքում, ծնվում է 8-10 ծագ: Տնտեսությունում կենդանիները բաշխված են՝ ըստ համապատասխան խմբերի: Ներկայումս այստեղ խնամվում է 4 ցեղ,

գավորվում է համակարգչային ծրագրի միջոցով:

Տնտեսությունում գործում է նաև նորագույն սարքավորումներով հագեցած սպանդանոց: Մսի համային հատկանիշների չփոփոխման նպատակով, սպանդից առաջ կենդանիները ենթարկվում են ցածր լարման էլեկտրահարման, որից հետո, քնած վիճակում, ենթարկվում սպանդի: Ինչ վերաբերում է ճագարի մսի որակին, ապա այն ոլորտամարս է, համարվում է բարձրորակ դիետիկ մթերք, որն արագորեն յուրացվում է օրգանիզմի կողմից: Այն պարունակում է երկաթ, B

ՄԱՍՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԳԸ

ՄԵՂՎԱԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՁՄԵՌՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՀԱՋՈՂ ՁՄԵՌՄԱՆ ՈՐՈՇԻՉ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

Մեղուների կյանքում ամենածանր և պատասխանատու շրջանը ձմեռն է: Մեղվի ընտանիքների հիմնական անկումը լինում է հենց այդ ժամանակ: Անկման պատճառները շատ են՝ ևնոգեմատոզ, վարոստոզ, ակարապիդոզ կամ պարատիֆ հիվանդությունները, թունավորումը մանանայի և վատ որակի մեղրով, ընտանիքում ձմռան պաշարի անբավարար լինելը, բնի սխալ դասավորումը, մկները, բորբոսը, խոնավությունը, հեղձուցիչ օդը մեղվի բնում, բարձր ջերմությունը և այլն: Ընդունված է, որ հոկտեմբերից մինչև մարտ ամիսները, եթե մեղվանոցում անկումը հասնում է 5%-ի, ապա նորմալ երևույթ է: Ձմեռման սեզոնի հաջող կազմակերպումը հանդիսանում է այն հիմնական գրավակները, որով պայմանավորվում է մեղվաընտանիքների նորմալ աճն ու զարգացումը, նրանց մթերատվությունը հաջորդ տարում: Այդ նպատակով առաջավոր մեղվաբույծների մոտ մեղվաբուծական սեզոնը սկսվում է մեղուները ձմեռման նախապատրաստելու աշխատանքներից:

Ուժեղ, կենսունակ, լավորակ կերակրված մեղվանոցում մեղվաընտանիքները լավ են ձմեռում: Գարնանը այդպիսի ընտանիքներում մայրն օրեցօր ավելացնում է ձվադրումը, և մեղուներն ավելի շատ թրթուրներ ու հարսնյակներ են խնամում: Այդպիսի մեղվաընտանիքի մեղուները երկար են ապրում, որը նպաստում է ընտանիքի արագ աճին և գարնանային մեղրաբերքի արդյունավետ օգտագործմանը: Մեղվաընտանիքի ձմեռումը բարեհաջող անցկացնելու համար անհրաժեշտ է աճեցնել հնարավորինս շատ երիտասարդ մեղուներ, դրանց համար կուտակել բավարար քանակությամբ բարձրորակ կերի պաշար՝ ձմեռային շենքերում ստեղծել օդի խոնավության ու ջերմության նորմալ պայմաններ:

Ձմռանը պետք է նախապատրաստվել ամբողջ ամռան ընթացքում՝ լավ եղանակներին չորացնել ձմեռանոցը և վերանորոգել, ձեռք բերել տաքացնող նյութ, մտահոգվել կերի մասին, միջոցներ ձեռնարկել մեղուների աշնանային աճեցման համար և այլն:

Մեղրաքամից հետո մեղվանոցում պետք է անցկացնել մեղվաընտանիքների ստուգում: Դրա նպատակն է՝ պարզել ընտանիքի վիճակը և պայմաններ ստեղծել երիտասարդ մեղուների աճեցման համար: Այդ աշխատանքը չի կարելի հետաձգել մինչև մեղրաբերքի լրիվ ընդհատումը, հակառակ դեպքում մեղուների հարձակումները կխանգարեն ընտանիքի մանրամասն ստուգմանը: Ընտանիքների գնման ժամանակ որոշում են նրա ուժը, մեղրահացերի վրա թրթուրների ու հարսնյակների պատկերը, որով կարելի է գնահատել մոր որակը, եթե այդ ընտանիքում չկան հիվանդություններ, հաշվի են առնում կերի պաշարը, բնից հեռացնում են դատարկ և ավելորդ մեղրահացեր: Եթե հեռացման ենթակա մեղրահացերի մեջ քիչ մեղր կա, դրանց սերելը քերում են հատուկ գործիքով, որը նախատեսված է սերել քերելու համար և դնում միջնատախտակի հետևը, մեղուները մեղրը վերցնում են տեղափոխում բույնը, որից հետո դատարկ մեղրահացը հեռացնում են փեթակից: Ընտանիքները խտանցելու ժամանակ պետք է բույնը բարձրիկներով տաքացնել:

Բնում եղած թրթուրների և հարսնյակների քանակով ու որակով գնահատում են մորը: Երբ մայրն անորակ է, նրան խոտանում են՝ ընտանիքին տալով նուրբ սնունդ վերցրած մայր: Երբեմն կարելի է մասնատումի մայրը մեղուներով ամբողջովին միացնել հիմնական մեղվաընտանիքին: Աշնանային ստուգման և հետագա աշխատանքների ժամանակ (ինչպես գարնանը) պետք է կանխարգելիչ միջոցներ ձեռնարկել մեղուների հարձակումների դեմ:

Աշնանային հարձակումներն ավելի վտանգավոր են, քան գարնանայինը, քանի որ այդ ժամանակ մեղուները լինում են գրգռված վիճակում և նրանց մոտ ուժեղ է արտահայտվում կողոպուտի աղբյուր փնտրելու ձգտումը: Մեղուների հարձակումներից խուսափելու համար, աշնանը մեղվաընտանիքի ստուգումները պետք է կատարել երեկոյան ժամերին թանգիֆից պատրաստած ցանցապատ մեկուսարանի տակ: Պետք է ձգտել մեծ քանակությամբ

երիտասարդ մեղուներ աճեցնել: Այդպիսի ընտանիքները լավ են ձմեռում: Բացի այդ, որքան ուժեղ է լինում ընտանիքը, այնքան խնայողաբար է ծախսվում ձմռան կերը: Թույլ ընտանիքների համար դժվար է բնում անհրաժեշտ ջերմություն պահպանել: Գարնանը ուժեղ ընտանիքի մեղուները, չնայած օրացուցային մեծ հասակին, ֆիզիոլոգիապես երիտասարդ կլինեն և կաճեցնեն ավելի շատ թրթուրներ ու հարսնյակներ:

Յետագոտությունները ցույց են տվել, որ ձմռանը փեթակում սատկած մեղուների հիմնական գանգվածը կազմում են հուլիսի վերջին տասնօրյակին մոր դրած ձվերից աճեցված մեղուները: Մոր կողմից շատ ուշ դրած ձուն ևս ցանկալի չէ, քանի որ ուշ աճեցված երիտասարդ մեղուները չեն հասցնում մաքրման թռիչք կատարել և ձմեռման են գնում ծանրաբեռնված աղիներով: Ձմռանն այդպիսի մեղուներն իրենց անհանգիստ են պահում, անհանգստացնում են ընտանիքին, իսկ նրանց մեծ մասը մինչև գարուն չի ապրում: Միջին գոտու պայմաններում լավ է, երբ մայրը ձվադրումը ավարտում է սեպտեմբերի առաջին տասնօրյակին:

Երբ ի հայտ եկավ վարոստոզ հիվանդությունը, մեղվաընտանիքների անկման տոկոսը սկսեց բարձրանալ՝ որոշ մեղվաընտանիքներում հասնելով մինչև հարյուրի: Պատճառը ոչ թե հիվանդության անբուժելիությունն է, այլ մեղվապահի չիմացությունը կամ այն պահանջների անտեսումը, որոնք պետք է օգտագործվեն մեղրաքամից հետո՝ մեղուների հաջող ձմեռման համար: Այդ պահանջները հիմնականում հետևյալն են. մոր հայտնաբերումը մեղրաքամից հետո, ճիշտ և ժամանակին մեղվաընտանիքների բների խտացում և բնում մեղրով շրջանակների դասավորում, մեղվի ընտանիքների բուժումը վարոստոզ հիվանդության դեմ, ընտանիքներում մանանայի մեղրի փոխարինումը մեղրով կամ օշարակով, աշնանը երիտասարդ մեղուներով ուժեղ մեղվաընտանիքներ աճեցնելը, կերակրման ստուգումը ընտանիքներում և, եթե պահանջվում է, դրա լրացումը, ևնոգե-

մատոզ հիվանդության դեմ կանխարգելիչ միջոցառումները դեղամիջոցներով:

ՄՈՐ ՀԱՅՆՆԱԲԵՐՈՒՄԸ ՄԵՂՎԱԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԵՏՈՒ



Մեղրահացերից սերել քերելու գործընթացը

Մեղրաքամի ժամանակ մեղվապահի անզուգականության հետևանքով լինում են մայրերի անկումներ: Դրա հայտնաբերման համար պետք է ստուգվի ընտանիքը՝ պարզելու համար արդյոք նա ունի բաց սերունդ (ձու, թրթուր), թե՛ ոչ: Այդ գործողությունն աշխատատար է: Նեկտարի բացակայությունը բնության մեջ կարող է հանգեցնել մեղվի հարձակումների: Դրանից կարելի է խուսափել, եթե մեղվապահի կողմից նշվեն այն ընտանիքները, որոնք մեղրաքամից հետո վտարում են բոռերին: Պետք է իմանալ, որ այն ընտանիքները, որոնք պահում են բոռերին, նրանց մոտ կան խնդիրներ մոր հետ, այսինքն՝ կա՛մ մայրը բեղմնավորված չէ կա՛մ այն չկա: Եթե այդ ընտանիքներում կա փակ սերունդ (նախահարսնյակ, հարսնյակ) և մայրապտուկներ, որոնցից ծնվել է մայր, անտեղի է որոնել մորը, որովհետև մոր հասակը 4 օրականից ոչ ավելի է: Մայրը սեռահատուն է դառնում 7 օրական հասակում: Այդ ժամանակ ընտանիքում չպետք է լինի աշխատավոր մեղվի փակ սերունդ:

7

ԽՃԱՆԿԱՐ

ՌԴ գյուղատնտեսական կոոպերատիվների 3-րդ համագումարը

Վերջերս Սանկտ-Պետերբուրգում կայացավ ՌԴ գյուղատնտեսական կոոպերատիվների 3-րդ համագումարը և ամփոփեց երկրի գյուղատնտեսության համար մի շարք կարևոր հարցեր: Գյուղացիական տնտեսությունների ոչ մեծ ձևաչափերը՝ անձնական, օժանդակ, ֆերմերական տնտեսությունները և փոքր, չխոշորացված կոոպերատիվները 2 չափազանց կարևոր խնդիրներ են լուծում. նպաստում են գյուղական տնտեսության զարգացմանը և երկրի պարենային անվտանգության ապահովմանը՝ տալով արտադրվող գյուղմթերքի 50-60 %-ը:

Համագումարի ավարտին ձևակերպվեցին առաջնահերթ խնդիրները. ա/ Սպառողական կոոպերատիվների միջոցով տնտեսավարման փոքր ձևերի համար ստեղծել պահեստավորման և առաքման ինֆրակառուցվածք: բ/ Միկրոֆինանսային կազմակերպությունների ցանցի, այսինքն՝ գյուղատնտեսական վարկային սպառողական կոոպերատիվների ցանցի միջոցով՝ քանի որ մեկ խոշոր հաճախորդի հետ աշխատելն ավելի դյուրին է, քան հարյու-

րավոր մանրերի, լուծել վարկային միջոցների հասանելիության ու մատչելիության խնդիրը:

Ֆինանսական ինստիտուտների այսօրվա անտարբեր վերաբերմունքը բացատրվում է ապահովագրական համակարգի թերզարգացած լինելով, կլիմայով պայմանավորված՝ բարձր ռիսկերով, վարչարարականությանը և պետական ոչ լիարժեք աջակցությամբ, ինչը խանգարում է դիտարկել գյուղատնտեսությունը՝ որպես կայուն համակարգ: Բայց և այնպես, տնտեսավարման փոքր ձևերը գնահատվում են՝ որպես ավելի ճկուն, տնտեսման տեսակետից՝ ընդունակ, որի համար պետությունը պարտավոր է պաշտպանել փոքր բիզնեսը նաև գյուղատնտեսությունում՝ ավելի խիստ մոտեցում դրսևորելով բանկային համակարգի նկատմամբ, որն անհարկի տարվում է գերշահույթով և ոչ շրջանառու կապիտալի կուտակումով:

Որպես գյուղացուն աջակցող հնարավոր գործիքներ՝ նշվում են. ա/ տոկոսադրույքի կոմպենսացում, բ/ գյուղատնտեսական վարկային կոոպերատիվների ֆինանսական փոխօգնության ֆոնդերի համալրում՝ սուբսիդավորման միջոցով՝ հատկացնելով դաշնային բյուջեից այնքան գումար, որքան ներդրել են ֆինանսական փոխօգնության կոոպերատիվի անդամները,

գ/ երաշխավորանքի ստացման, երաշխավորության, գրավի ապահովման ծախսերի մասնակի (25-30 %-ով) սուբսիդավորման տրամադրում, դ/ երաշխավորանքների համակարգի զարգացում, ե/ մեզակարգավորիչի պահանջների դիվերսիֆիկացում՝ կախված կոոպերատիվի գործունեության առանձնահատկություններից:

ՀԳ. Կարևոր է, որ նշված առաջարկությունների հիմքում նախապայմանություն կա, իսկ արդեն հաջողված լինելը երաշխիք է առաջարկությունների իրականացման պարագայում, և կարելի է ակնկալել շրջափերի արդյունքներ: ՌԴ-ում վերջին տարիներին, Ագրոարդյունաբերական համալիրի զարգացման ազգային ծրագրի (ԱՀՀԱՄ) ընթացքում կազմակերպվեց 1000-ից ավելի գյուղատնտեսական վարկային սպառողական կոոպերատիվ (ԳՎՍԿ), որի շնորհիվ գյուղատնտեսական փոքր տնտեսությունների մի մասն ագրոպարենային վարկավորման ծավալում աճեց 2005 թվականի 0.16 %-ից մինչև 11 %՝ 2007 թ. և 14 %՝ 2008 թ.:

Արդյունքում հեղափոխ մի քանի տարում՝ 2012 թ.-ից մինչև 2014 թ., պետական աջակցության փոկոսը սուբսիդիաների ձևով նվազեց 8-ից մինչև 5.2 %:

Հարգելի քաղաքացիներ, Տեղեկացնում ենք, որ Գյուղատնտեսական հանրագիտարան ձեռք բերելու համար կարող եք զանգահարել 011 23 14 30 հեռախոսահամարով: Հանրագիտարաններն առկա են նաև Գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոններում, ինչպես նաև «Նոյան Տապան» և «Բուկինիար» գրատներում:

**ՄԱՍՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ**

**ՄԵՂՎԱԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՁՄԵՌՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՀԱՋՈՂ ՁՄԵՌՄԱՆ ՈՐՈՇԻՉ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ**

6

Եթե մեղվի ընտանիքը անբնական ձայներ է արձակում, մեղուները վազվզում են արկանոցի մոտ՝ թռչեցատախտակի վրա, այդպիսի ընտանիքը պետք է ստուգել և պարզել արդյո՞ք ունի մայր, թե՞ ոչ: Եթե այդպիսի ընտանիքում կան ձվեր և 2-3 օրական թրթուրներ կամ յուրաքանչյուր բջջում կա 2-3 ձու, դա չի նշանակում, որ ընտանիքը բոռացու է: Ե՛վ մեղուները, և՛ նոր բեղմնավորված մայրը կարող են մի քանի ձու դնել մեկ բջջում, և ձվերը դրվեն ոչ թե բջջի կենտրոնում, այլ՝ եզրում: Եթե այդպիսի ընտանիքում կան նոր կառուցված թասակներ կամ հներում դրված մի քանի ձվեր, այդ դեպքում հստակ կարող ենք ասել, որ ընտանիքը բոռացու է: Այդպիսի ընտանիքին պետք է տալ նոր բեղմնավորված մայր նուկլեուսից կամ միացնել ուրիշ ընտանիքներին: Այդ գործողությունները ոչ միշտ են տալիս դրական արդյունք:

Բեղմնավորված մայրը տեղավորում են մայրավանդակի մեջ և կախում բնի կենտրոնում՝ մեղրահացերի արանքում: Երկրորդ օրը մայրավանդակի փականը բացում են և փակցնում մոմաթերթով, 6-7 ժամ անց ստուգում են մայրավանդակը. եթե մեղուները կրծել են մոմաթերթը և մորը բաց թողել, ստուգվում է ընտանիքը: Գտնելով մորը՝ ուսումնասիրում են, թե ինչպես են մեղուները վերաբերվում նրան: Եթե վազվզում են մոր հետևից, քաշքշուկ ոտքերից և թևերից, ուզում են խայթել կամ շրջապատել են կծիկի մեջ, այդ ժամանակ մորն անմիջապես բռնում են և ցանկալի է, որ տեղավորեն ուրիշ վանդակում: Դրանից հետո վերցնում են մեկ բաժակ գոլ ջուր (35-37°C), որի մեջ ընկղմում են մորը վանդակով 3-4 անգամ, ապա կախում են փեթակում: Վերոնշյալ գործողությունները մոր հետ կրկնում են: Այդպիսի գործողություններն օգնում են բոռացու ընտանիքին ընդունել բեղմնավորված մորը: Եթե մեղվանոցում չկա պահուստային բեղմնավորված մայր, բոռացու ընտանիքը պետք է վերացվի, քանի որ այդ ընտանիքը ձմռան ընթացքում անպայման կսատկի: Այդ նպատակով փեթակը մեղուների հետ հանում են մեղվանոցից, լավ ծխահարում, որի հետևանքով մեղուներն իրենց մեղրապարկը լցնում են մեղրով: Դրանից հետո մեղուներին թափ են տալիս մեղրահացերից: Նրանք թռչում են իրենց նախկին փեթակի տեղը: Զգտնելով իրենց փեթակը՝ մտնում են հարևան փեթակների մեջ: Լցված մեղրապարկերով մեղուներին ուրիշ փեթակների մեղուները ընդունում են՝ սատկացնելով այն մեղուներին, որոնք ձվադրում են:

**ՃԻՇՏ ԵՎ ԺԱՄՆԱԿԻՆ ՄԵՂՎԱԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԲՆԵՐԻ ԽՏԱՑՈՒՄ**

Մեղվի ընտանիքների բների նեղացումը սկսում են՝ հանելով դատարկ և կիսակառուցված մեղրահացերը: Բաց գույնի, նոր կառուցված մեղրով մեղրահացերը տեղավորում են բնի կողքերում: Զիջ մեղրով մեղրահացերը տեղավորում են միջնատախտակից հետո՝ քերելով սերեկած մեղրը: Այդպիսի մեղրահացերից մեղուն մեղրը տեղափոխում է բնի մեջ: Մեղրահացերը, որոնք լցված են մեղրով և կիսով չափ սերեկած, տեղավորում են բնի կենտրոնում: Լավ են համարվում այն մեղրահացերը, որոնք շագանակագույն են և ներքևի մասը դատարկ է կամ բջիջները կիսով չափ են լցված մեղրով: Այդպիսի մեղրահացերն ավելի երկար են պահում տաքությունը, և մեղուները դրանց վրա ավելի հաջող են կծիկ կազմում:

**ՄԵՂՎԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԲՈՒԺՈՒՄԸ ՎԱՐՈՍՏՈՋ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ԴԵՄ**

Ձմռան պաշարի լրացումից առաջ պետք է կազմակերպվի մեղվի ընտանիքների բուժումը վարոատողի դեմ: Հայտնի է, որ մեղրաքամից հետո զգալի չափով իջնում է մոր ձվադրությունը: Վարոատողի տիզը գրկվում է թրթուրների վրա նորից ձվադրելու հնարավորությունից: Կրճատվում է նոր ծնվող վարոատողի տզերի քանակը, որոնք կարող են ձմռանը մեղուների հետ՝ տեղավորվելով որովայնի սեզմենտների արանքում, իսկ մյուս տարի կարող են սերունդ տալ: Եթե կերակրում անցկացնեն բուժումից առաջ, կբարձրանա մոր ձվադրումը, որի հետևանքով կավելանան նոր ծնված տզերը: Բուժման արդյունավետությունը կիջևի, կբարձրանա դեղամիջոցի քանակությունը մեղրի մեջ:

**ԲՈՒԺՈՒՄԸ**

**Թրթնջկաթուն:** 20 գրամ թթուն լուծում են մեկ լիտր գոլ ջրում և գոլ վիճակում, սրկիչի օգնությամբ օգտագործում՝ 1 շրջանակ մեղվի համար 10 մլ: Օդի ջերմաստիճանը պետք է լինի 16°C-ից ոչ պակաս: Բուժման ավարտից հետո անհրաժեշտ է ստուգել վարակվածության աստիճանը: Եթե այն 5%-ից ավելի է, ապա բուժումը կրկնում են:



**Բիպին-S:** Դեղնավուն, թափանցիկ հեղուկ է: Օգտագործումից առաջ 1 լ գոլ (35-40°C) ջրին ավելացնում են 0.5 մլ դեղամիջոց, լավ խառնում են՝ մինչև համաչափ, կաթնագույն եմուլսիա



ստանալը: Պատրաստի եմուլսիան հավաքում են ներարկիչի մեջ և բարակ շիթով պատում միջշրջանակային տարածությունները: մեղուներով պատված մեկ մեղրահացի հաշվով 10 մլ: Աշնանը՝ մեղրաքամից հետո մշակում են 2 անգամ՝ 7 օր ընդմիջումով: Ըստ հրահանգի՝ ընտանիքները պետք է մշակել մեկ անգամ մեղրաքամից հետո, և երկրորդ՝ ուշ աշնանը, եթե մեղուների վրա կան տզեր: Բուժման մեկ փուլը կատարվում է 2 անգամ՝ 7 օր ընդմիջումով:

Հաշվի առնելով տղի բազմացման կենսաբանությունը՝ մենք առաջարկում ենք բիպին T-ով մշակումները կատարել ուշ աշնանը՝ բաց սերնդի բացակայության կամ քիչ քանակի դեպքում, 3 անգամ, 4 օր ընդմիջումով:

**Բիվարոլ:** Յուղանման, սպիտակ հեղուկ է: Ունի ուժեղ տոասպան հատկություն, ազդում է Վարոա Յակոբսոնի հասուն ձևերի վրա: Դեղամիջոցն օգտագործում են գարնանը և աշնանը, երբ մեղվաընտանիքներում բացակայում են ձվերը և թրթուրները: Օգտագործումից առաջ 1 մլ բուժանյութը լուծում են 1 լ գոլ (35-40°C) ջրում, լավ խառնում են մինչև համաչափ, կաթնագույն եմուլսիա ստանալը: Պատրաստի եմուլսիան հավաքում են ներարկիչի մեջ և բարակ շիթով լպատում միջշրջանակային տարածությունները: մեղուներով պատված մեկ մեղրահացի հաշվով՝ 10 մլ: Մշակումները կատարում են 2 անգամ՝ 7 օր ընդմիջումով:

Խորհուրդ չի տրվում բուժել այն ընտանիքներին, որոնք ուժը պակաս է 45 մեղրահաց պատող մեղվից: Խոշոր մեղվանոցներում ներարկիչ օգտագործելը հարմար չէ, այն բավականին ժամանակատար է և գործնականում գրեթե անհնարին: Հետևաբար, նման դեպքերում ավելի լավ է ներարկիչը փոխարինել պլաստմասե շշերով: Շիկացրած մեխով շշի կափարիչին 2-2.5 մմ տրամագծով անցք են բացում: Բուժիչ լուծույթը շշից լցնում են մեղրահացերի միջև, ինչպես ներարկիչ օգտագործելիս: Որոշ ժամանակ անց մեղվապահն աչքաչափով կարողանում է այնպես բաշխել, որ 1 լ տարողությամբ շշով դեղանյութը օգտագործվի 10 լիարժեք ընտանիք բուժելու համար:

Վարոատողի բուժման նպատակով՝ օգտագործում են նաև տոասպան դեղամիջոցներով՝ ներծծված տարբեր նյութերից պատրաստված շերտիկներ՝ ֆունիսան, ամիպոլտ, ապիդեզ, ապիֆտ, բայվարոլ, ապիգել, ապիստան, ապիստար, Էկոպոլ, ֆլուվալիդեզ և այլն: Եթե շերտիկներն առանձին հերմետիկ փաթեթավորված չեն, ապա սուսինը բացում են օգտագործումից անմիջապես առաջ: Նշված դեղանյութերով տզերի դեմ պայքարը տանում են վաղ գարնանը՝ մեղուների մաքրման թռչեցից հետո, և աշնանը՝ մեղրաքամից հետո: Թվարկած բուժանյութերից որևէ մեկի մի ծայրին անցք են բացում, հագցնում մետաղյա կամ փայտյա ձողի և ուղղահայաց կախում ընտանիքի բնի 3-րդ և 4-րդ մեղրահացերի միջև՝ փոքր-ինչ դեպի փեթակի հետին պատը, եթե մեղվաընտանիքը միջին ուժի է, իսկ եթե այն ուժեղ է, օգտագործում են 2 շերտիկներ՝ 3-4-րդ և 7-8-րդ մեղրահացերի միջև: Շերտիկները մեղվի ընտանիքներում պահում են 3-ից մինչև 25 օր, որը պայմանավորված է մեղրահացերում թրթուրների ու հարսնյակների առկայությամբ և դրանց քանակով:

Բացի վերոգրյալ դեղամիջոցներից, վարոատող հիվանդության դեմ արտադրվում են նաև հետևյալ բուժանյութերը՝ վարոտապոլ, վիլաբիկ, բիպին, տանիս, ՊԱԿ-750, աքվաֆլո, ապիտ, յանտրին, տեդա, ապիտակ, վետֆոր, որոնք օգտագործելիս խստորեն պետք է հետևել դրանց կիրառման հրահանգներին:

**Ապիմաքս:** Վերջին 3 տարիների ընթացքում, անասնաբուժական դեղատներում վաճառվում է «ապիմաքս» պատրաստուկը, որի բաղադրության մեջ մտնում են փշատերևի, սիստորի, դաշտային ձիաձետի, էխինացե ալ կարմիրի, սովորական օշինդրի, գնդածև Էկվալիպտի և տաք պղպեղի Էկստրակտներ: Այդ պատրաստուկի կիրառման հրահանգում նշված է, որ օգտագործվում է մի շարք հիվանդությունների դեպքում, սակայն մինչ օրս որևէ գիտական հիմնավորում չկա այդ մասին, հետևաբար, այս կամ այն հիվանդությունը բուժելիս, չի կարելի հույսը դնել միայն այս պատրաստուկի վրա:

Միատեսակ դեղամիջոցի բազմիցս օգտագործումը հանգեցնում է նրան, որ տիզը ձեռք է բերում դիմադրողականություն՝ դեղամիջոցի նկատմամբ: Այդ պատճառով խորհուրդ է տրվում պարբերաբար փոփոխել օգտագործվող դեղամիջոցները:

**Նորակ Հակոբյան,**  
կենսաբանական գիտությունների թեկնածու  
**Կարեն Ավետիսյան,**  
գյուղատնտեսական գիտությունների թեկնածու

**ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ**

**Առաջին օրաց՝ արգելափայրի սպեղծման ուղղությամբ**

**FLEG II ծրագիրը մեկնարկել է դեռևս 2013 թ.:** Հայաստանում այն ֆինանսավորվում է Եվրամիության կողմից, իսկ Ավստրիական գարգացման համագործակցությունն (ԱՀՀ) ապահովում է ծրագրի հավելյալ ֆինանսավորումը՝ մի շարք լրացուցիչ գործողությունների իրականացման համար: Ծրագիրն ունի մի շարք միջոցառումներ՝ ուղղված ՀՀ Տավուշի մարզում առկա երեք անտառային արգելավայրերի հիման վրա՝ Ֆիջևանի, արգելավայրի սպեղծմանն ու գործունեության համար պայմանների ապահովմանը: Դրանք ֆինանսավորում են ԱՀՀ-ի կողմից և իրականացվում են WWF-Հայաստանի կողմից:

Ընդհանուր նախաձեռնությունը



միտված է առկա անտառային արգելավայրերի օպտիմալացմանը, ինչն այսօր չափազանց կարևոր խնդիր է մեր երկրի համար: Այն էապես կիզորացնի Հայաստանի անտառային պահպանվող տարածքները և կնպաստի անտառային բնական պաշարների կայուն կառավարմանը: Ավելին, ՀՀ կառավարությունն «Իջևանի» արգելավայրի ստեղծումը ներառել է ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարություն, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիր՝ փաստաթղթում, որն ընդունվել է 2014 թ. սեպտեմբերին:

Ներկայումս արգելավայրի սահմանների քարտեզագրումն ու հստակեցումը գտնվում են եզրափակիչ փուլում՝ քարտեզի նախագիծը քննարկվում է «Հայաստան» ՊՈԱԿ-ի հետ: FLEG II-ի շրջանակներում պլանավորված այլ միջոցառումները ներառում են՝ դրա կառավարման պլանի նախագծի մշակում, արգելավայրի ստեղծման, դրա սահմանների, կանոնադրության և կառավարման պլանի հաստատման համար իրավական փաստաթղթերի նախագծերի մշակում, մարդկային և տեխնիկական հզորությունների ստեղծում: Նոր արգելավայրը կմիավորի ինչպես առկա արժեքավոր, այնպես էլ՝ վերականգնման ենթակա խախտված տարածքները:

Հարկ է նշել նաև, որ արգելավայրն անմիջականորեն կից է լինելու «Դիլիջան» ազգային պարկին՝ ապահովելով նույնատիպ անտառային էկոհամակարգերի շարունակություն հանդիսացող տարածքների պահպանությունը:

[www.armenia.panda.org](http://www.armenia.panda.org)

